

տուծոյ, որ չառնէ իրմէ՝ երկրիս վրայ ունեցած իր միակ ծանրագին բանը : “ Իրաւունք չէ, կ'ըսէր, որ այնչափ տարի քու հօրդ թագաւորին համար աշխատելէս ետև, հիմա վայրկենի մը մէջ այս ունեցածս ալ կորսնցընեմ, որ միակ իմին բաղդս է . [թէ որ կ'ուզես, առ բոլոր մէկալ բաները . բայց ատիկայ ինձի թող,, : Ծագաւորը ան ատեն ապահով միտքը դրաւ որ Ալիպէյին անիրաւութեամբ դիզած գանձը հոն պիտի ըլլար . ուստի ձայնը աւելի բարձրացուց, և վճռաբար ուզեց որ դուռը բացուի : Ա երջապէս Ալիպէյ, որուն քովն էին բանալիները, անձամբ բացաւ դուռը, և տեսան որ հոն հովուական զգեստէ, գաւազանէ և սրինգէ մը զատ ուրիշ բան չկար, զորոնք Ալիպէյ ատեն մը կը գործածէր, և շատ անգամ կ'երժար ուրախութեամբ զանոնք տեսնալու համար, որպէս զի ըըլլայ թէ իր առջի վիճակը մոռնայ : “ Ա հաւասիկ, ով մեծ թագաւոր, ըսաւ, ասոնք են իմ առջի երջանկութենէս մնացած ծանրագին բաները, զորոնք ոչ բաղդն և ոչ քու իշխանութիւնդ երբէք կրցեր են ինձմէ վերցընել . ահա աս է իմ գանձս զորն որ կը պահէմ, որպէս զի եթէ զիս առջինին պէս նորէն աղքատ ընես՝ ասով հարստնամ : Առ բոլոր մէկալ բաները, և թող ինձի առջի վիճակիս քաղցր գրաւականները : Այսոնք են իմ ձշմարիտ բարիքներս ուրոնք ոչ ոք կրնայ առնուլ ինձմէ : Այս ասոնք են այն պարզ և անմեղ բարիքները, որ միշտ քաղցր են անոնց համար որ հարկաւոր եղածովը գիտեն գոհ ըլլալ և աւելորդին համար բնաւ հոգի ու մոմտուքի մէջ չեն իյնար . ասոնք են դարձեալ այն բարիքները, որ և ոչ վայրկեան մը ինձի վիշտ պատճառեր են : Ո՞չ, զուք էք միայն այդ պարզ և երջանիկ կենաց գործիքները . զձեզ միայն կը սիրեմ, և ձեզի հետ միայն կ'ուզեմ ապրիլ ու մեռնիլ : Ինչո՞ւ ուրիշ խաբեբայ բարիքներ զիս պիտի պատրէն, և կենացս անդորրութիւնը վրդովէն : Ո՞վ մեծ թագաւոր, բոլոր աս

հարստութիւնները քեզի կը դարձընեմ, զոր դուն քու առատաձեռնութեամբ ինձի չնորհ կը պահէմ : Ա միայն կը պահէմ ինչ որ քու թագաւոր հօրդ ինձի ըրած չնորհքներովը զիս թշուառ ընելէն առաջունէի,, : Ծագաւորը աս խօսքերս լսելով, ճանչցաւ Ալիպէյին անմեղութիւր, և զինքը կորսնցընել ուզող պալստականներուն դէմ բարկացած զիրենք քովէն վլնտեց : Ալիպէյը իր զլիսաւոր պաշտօնեան ըրաւ, և իրեն յանձնեց ամենէն գաղտնի գործողութիւնները : Այց Ալիպէյ ամէն օր կ'երժար տեսնելու իր հովուական ցուպը, սրինգն և զգեստը, զորոնք միշտ գանձերուն քովը դրած կը պահէր, որպէս զի եթէ յանկարծ յեղյեղուկ բաղդը իր վիճակը այլայլու ըլլայ, նորէն զանոնք առնէ գործածէ : Խորին ծերութեան մէջ մեռաւ, չուզելով բնաւ պատժել ոչ իր թշնամինները, և ոչ ալ հարստութիւն դիզել . և ընտաննեացը համար ալ այն չափ բան միայն թողուց որ կարենան հովուական վիճակին մէջ բարեպէս ապրիլ, զորն որ միշտ աւելի ապահով և աւելի երջանիկ կը սեպէր :

### Անմետ և Ուշիտ :

Երկար ատենէ ’ի վեր բոցատոչոր երաշտութիւն մը Հնդկաստանի գաշտերը կ'անապատացներ : Այս միջոցին երկու հովիւ, Ամէտ և Անշիտ, կալուածքներուն եզերը իրարու հանդիպեցան, ծարաւէն մնչուան դուռը հասած . և կը տեսնային ոչխարները որ տկարացած և չորս կողմերնին առած կը հեւային . ազքերնին երկինք վերուցած կը խնդրէին որ շուտով այս յետին թշուառութեանց դարման մը ընէ : Ո՞էյ մըն ալ յանկարծ օդուն մէջ խորլսութիւն մը տիրեց, թուզունները լուցին և ոչխարները մայելէն ու բառաչելէն դարբեցան . և երկու հովիւնները ձորին մէջ մարդու կերպարանքով էակ մը տեսան, բայց քան զմեզ աւելի բար-

Ճրահասակ և փառաւոր տեսքով . ասի .  
կայ երթալով քովերնին մօտեցաւ , ու  
երբոր մօտանց զինքը տեսան , մէկէն  
Ճանչան թէ բարիք և շարիք բաշխող  
Ոգին է , մէկ ձեռքը առատութեան  
խուրձը բռնած , իսկ միւսը՝ սատակման  
սուրը : Աստիկ վախցած կ'ուզէին պա-  
հուրտիլ , բայց Ոգին՝ Շաբթիոյ խնկա-  
ւէտ անտառներուն մէջ իրիկուան դէմ  
շնչող զեփիւոին նման քաղցր ձայնով  
մը զիրենք կանչելով , “ Ո՞ստ եկէք ,  
ով հողածինք , ըսաւ , ձեր բարերարէն  
ինչու կը փախչիք . այնպիսի շնորհք մը  
ձեզի ընելու կու գամ , որ ձեր անխո-  
հեմութեամբը միայն կրնայ ձեզի անօ-  
գուտ և վնասակար ըլլալ : ” Ո՞ւզի ինծմէ  
ջուր կ'ուզէք , ահա պատրաստ եմ ձեզի  
ջուր տալու . բայց ձեզմէ կ'ուզեմ իմա-  
նալ թէ ինչ կերպով կրնամ զձեզ գոհ  
ընել : Ո՞ի փութաք մէկէն պատասխան  
տալու . լաւ մոտածեցէք որ մարդուս պի-  
տոյից և վայելից վերաբերեալ բանե-  
րուն մէջ , ինչպէս խիստ քիչն նոյնպէս  
չափազանցէն ալ պէտք է վախնալ : Ո՞էկ  
խօսքով , լաւ նայեցէք որ ծարաւոյն  
տագնապը , ձեզի մոռցընել չտայ խըզ-  
գուելու վտանգը : Բուզի ուրեմն ինչ որ  
կ'ուզէք . և դուն ՇՀմէտ նախ խօսէ : ”

— “ Ո՞վ բարերար Ոգիդ , պատաս-  
խանեց ՇՀմէտ , ներէ ինծի եթէ քու  
ատ վսեմ կերպարանքդ տեսնալը զիս  
կը խօսվէ . Պօտի առուակ մը կը խըն-  
դրեմ , որ ոչ ամառը ցամքի և ոչ ալ ձմե-  
ռը առատանայ : ” — “ Ո՞ւնենաս , ” ,  
ըսաւ Ոգին , և ձեռքի սուրը գետինը  
զարկաւ , որ այն միջոցին բարերարու-  
թեան գործիքի մը փոխուեցաւ . մէյ մըն  
ալ առջենին աղքիւր մը բղիւց և խո-  
խոջալով գնաց ՇՀմէտին դաշտերը ծած-  
կեց . ծաղիկները նոր նոր անուշ հոտեր  
բուրեցին , ծառերը կանաչագեղ տերե-  
ներով զարդարուեցան , և ամէն աղգի  
կենդանեաց դասակները ունեցած սաս-  
տիկ ծարաւնին անցուցին :

“ Ի՞ն ատեն Ոգին մէկալ հովուին դառ-  
նալով նշան ըրաւ որ խօսի . ” Խնդիրքս  
ասէ , ըսաւ Ուշիտ , որ համիս կալուած-  
ներուս մէջ վազքընել տալ Պանդէս

գետը իր ջրերովն ու ձկներովը , ” Պար-  
զամիտ ՇՀմէտը ընկերոջն ազնուական  
փառափիրութեանը վրայ զարմանալով ,  
ինքնիրեն կը սրդողէր թէ ինչու ինքն  
ալ ատանկ փառաւոր խնդիրք մը ըլրաւ .  
բայց Ոգին Ուշիտին դառնալով , “ Փա-  
փաքներդ չափաւորէ , ըսաւ , ով մարդ  
տկար և անխոչէմ : Քեզի անօգուտ  
եղածին ետևէն մի ըլլար . ինչու քու  
ընկերէդ աւելի բան կը խնդրես . միթէ  
իրմէ աւելի ուրիշ կարօտութիւն մը  
ունիս , ” : Շայ իմաստառն ազգարարու-  
թիւնս լսելէն վերջն ալ Ուշիտ խնդիր-  
քին վրայ հաստատուն կեցաւ , և մրտ-  
քէն կը խնտար՝ ՇՀմէտին ողորմելիու-  
թեանը վրայ , ինքն որ Պանդէսի իշ-  
խան և տէր եղած էր : Ի՞ն ատեն Ոգին  
սկսաւ դէպ ’ի գետը երթալ . իսկ ի-  
րենք անհամբերաբար ըլլալիքին կը  
սպասէին . նոյն միջոցին Ուշիտ արհա-  
մարհանօք մը ընկերակցին երեսը կը  
նայէր . և ահա յանկարծ ալիքներու  
մոնչալուն ձայնը լսուեցաւ , և յորդա-  
գնաց հեղեղին վազելէն իմացուեցաւ  
որ Պանդէսին թումբերը պատռուեր  
են : Շայ ահագին ջուրց հեղեղը մէկ  
վայրկենի մէջ բոլոր Ուշիտին դաշտե-  
րը աւրըշտիեց , ծառերը արմատէն հա-  
նեց , ոչխարները կլեց ու առաւ տա-  
րաւ , և գժբաղդաբար զինքն ալ մէկ-  
տեղ , և Պանդէսի տէրը կոկորդիլսի  
մը կերպակուր եղաւ :

---